



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՓԵՏՐՈՒԱՐ, 2015

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեալս քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 111

ՕՐՀՆԵՐԳՈՒԹԻՒՆ ՏԻՐՈՋ

Ամբողջ սրտովս կ'ուզեմ քեզի գոհութիւն յայտնել, Տէր,
ուղիղ վարքով ապրող մարդոց հետ,
ժողովուրդիդ հետ համախումբ:
Մեծ են Տիրոջ գործերը. զանոնք սիրողները կը սերտեն զանոնք:
Տիրոջ գործերը փառաւոր են եւ հիանալի,
եւ իր արդարութիւնը՝ յաւիտենական:
Տէրը կ'ուզէ որ յիշատակուին սքանչելի գործերը իր,
թէ՛ Տէրը ինք բարեգութ է եւ ողորմած:
Իրմէ ակնածողներուն ուրելիք կու տայ, եւ իր ուխտը չի մոռնար բնաւ:
Իր գործերուն զօրութիւնը ցոյց տուաւ իր ժողովուրդին,
անոնց տալով հեթանոս ազգերու երկիրը:
Անոր գործերը արդար են եւ իրաւացի.
անոր բոլոր հրահանգները վստահելի են,
սահմանուած՝ մնալու յաւիտեանէ յաւիտեան,
որպէսզի գործադրուին հաւատարմութեամբ եւ ուղիղ կերպով:
Տէրը փրկութիւն դրկեց իր ժողովուրդին,
եւ հրամայեց իր ուխտը պահել յաւիտեան. սուրբ է ան, եւ ահաւոր:
Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է.
խելացի է ան՝ որ Տիրոջ պատուերները կը գործադրէ:
Յաւիտենապէս անոր օրհներգութիւնն պիտի մատուցուի:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՊՈԹՔ

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԵԼԻՑ Ի (20) ԳԼՈՒԽ (Շար.)



ՏԱՄԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ (20:7)

Պապուիրանները կը շարունակուին:

«Քու Տէր Աստուծոյ անունը պարապ տեղ բերանդ չառնես. որովհետեւ Տէրը իր անունը պարապ տեղ բերան առնողը անմեղ պիտի չտայ» (7 հմր):

Հեղաքրքրական արտայայտութիւն է պապուիրան մըն է այս մէկը: Ասկէ առաջ տեսանք, երրորդ գլխուն մէջ, երբ Աստուած խօսեցաւ Մովսէսին հետ անկէզ մորենիին ընդմէջէն, Մովսէս հարցուց թէ ինչ է անունը Աստուծոյ, որպէսզի ըստ այնմ ներկայացնէր Իսրայէլի ժողովուրդին: Եւ ահա այն արեւն Աստուած ըսաւ. «Ես եմ որ էն»: Սա կը նշանակէ Աստուած Իր անունը յայտնեց Մովսէսին: Տակաւին, քարբեր քարբեր առիթներով Աստուած ինքզինք յայտնեց քարբեր անուններով: Այդ անունները ուրիշ բան չէին եթէ ոչ Աստուծոյ նկարագիրը ցոյց տուող: Անոր ստորագելիները: Ուրեմն այդ բոլորի մէջ որ անունը օգտագործել կամ ոչ:

Միս կողմէ, հեղաքրքրականօրէն, երբ «պարապ տեղ» բացատրութիւնը կը համեմատենք գրաբեր թարգմանութեան հետ, ապա այնտեղ կը տեսնենք թէ հետեւեալ բացատրութիւնը կայ, «ի վերայ սնտրեաց», որ կը նշանակէ սնտրի, պարապ բաներու վրայ: Ահա կարծէք այս իսկ պատճառով, Իսրայէլի ժողովուրդը Աստուծոյ անունին փոխարէն սկսաւ գործածել «Ատոնայ» բառը, որ կը նշանակէ «Տէր»:

Ամեն պարագայի, եթէ այս պապուիրանը կապ ունի նախորդ երկու պապուիրաններուն հետ. «Ինձմէ գաւ ուրիշ աստուած չունենաս», «կուռքեր չշինես» եւ անմիջապէս «սնտրի բաներու համար իմ անունս չգործածես»: Սնտրի բառով կարելի է հասկնալ, առաջին հերթին, կուռքերը որոնք պարապ է սնտրի բաներ են, ուրեմն կարելի չէ Աստուծոյ փրութիւնը փառքն ու պատիւը սնտրի բաներու տալ, մանաւանդ երբ Տէրը զգուշացուց ըսելով. «Ես նախանձոր Աստուած եմ»: Ուրեմն, կը նշանակէ այդ կուռքերը Աստուած մի՛ անուաներ:

Մէկ այլ ուրիշ բացատրութիւն մը, սուտ երդումներ չընել, եւ Աստուծոյ անունը չհաւագործել: Յաճախ մարդիկ իրենց ըսածը հաստատելու համար յաճախ Աստուծոյ անունը կը գործածեն, կ'երդնուն անոր անունով, սակայն, պէտք չէ սուտ մը հաստատելու, համոզելու համար Աստուծոյ անունը չարաշահել, որովհետեւ այդ ձեւով արհամարհած կ'ըլլանք զԱստուած, հայիցոյութեան առարկայ կը դարձնենք Տիրոջ սուրբ անունը: Ահա այս իսկ պատճառով Աստուած սկիզբէն կը զգուշացնէ թէ Իր սուրբ անունը սնտրի բաներու վրայ չգործածել, մանաւանդ երբ Աստուած Ինք նախանձախնդիր է Իր սուրբ անուան: Ինչպէս կը կարդանք Եսայի մարգարէի գիրքին մէջ. «Ես իմ փառքս ուրիշին չեմ տար» (42:8):

Այս իսկ պապուիրանով Աստուած կ'ուզէ որ այս ժողովուրդը ըստ այնմ դաստիարակուի, միշտ ի մտի ունենալով որ Աստուծոյ անունը սուրբ է: Այդ անունը կարելի է օգտագործել, այնքան արեւն որ փառաբանանքի, Տէրը փառաւորելու համար է որ պիտի օգտագործեն, այլապէս զգուշ պէտք է որ ըլլան:

Այսօր ալ նոյն այս պապուիրանը մեզի ուղղուած մեզ ալ կը դաստիարակէ ու կը սորվեցնէ թէ ինչպէս ու ինչպիսի առիթներով օգտագործելու ենք Տիրոջ անունը: Որքան նաեւ մենք զգուշ ըլլալու ենք թէ յանկարծ չըլլայ թէ Աստուծոյ անունը սնտրի ու պարապ բաներու համար օգտագործելու: Ահա այդ իսկ պատճառով Քրիստոս երբ աղօթել սորվեցուց իր աշակերտներուն առաջին իսկ բառերն էին. «Երբ կ'աղօթէք այսպէս աղօթեցէք: Հայր մեր որ երկինքի մէջ ես, քու անունդ սուրբ ըլլայ»: Իւրաքանչիւր հաւատարեցեալի փափաքը ու խնդրանքը պէտք է ըլլայ Աստուծոյ անունին սուրբ ըլլալը: Մեր ըսելովը չէ որ Աստուծոյ անունը սուրբ կ'ըլլայ, այլ երբ կ'աղօթենք եւ կը խնդրենք որ «քու անունդ սուրբ ըլլայ», կը նշանակէ ոչ թէ սուրբ պիտի ըլլայ, այլ սուրբ է, եւ այդպէս ըսելով մենք պէտք է այդպիսին ճանչնանք, դաւանինք, եւ ըստ այնմ զգուշ ըլլանք, որ այդ սուրբ անունը չարափառորուի: